

Հետիոտնային ուղիներ

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» 2018 թվականի ապրիլի 5-ի N 43-Ա հրամանի

Քաղաքաշինական միջավայրում հետիոտն ուղիների և անցումների նախագծերն անհրաժեշտ է մշակել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01 շինարարական նորմերի պահանջների:

Սայլակներով հանդիպակաց շարժման դեպքում, երթևեկության ուղու լայնությունը պետք է լինի ոչ պակաս 1,8 մ՝ հաշվի առնելով թիկնաթոռ-սայլակների եզրաչափքերը գործող նորմատիվ փաստաթղթերի համաձայն: Սայլակներով երթևեկության ուղու երկայնական թեքությունը չպետք է գերազանցի 5%:

Հետիոտնային ուղիների ծածկույթի վրա նախազգուշական ֆունկցիա կատարող շոշափողական (տակտիլ) միջոցները պետք է տեղադրել տեղեկատվության օբյեկտից՝ վտանգավոր հատվածի սկզբից, շարժման ուղղության փոփոխումից, մուտքից և այլն, ոչ պակաս 0,8 մ հեռավորության վրա:

Հետիոտնի ճանապարհների, մայթերի և թեքահարթակների համար որպես ծածկույթ չի թույլատրվում լցովի կամ խոշորկառուցվածքային նյութերի օգտագործումը, ինչը կխոչընդոտի բնակչության սակավաշարժ խմբերի թիկնաթոռ-սայլակներով կամ հենակներով տեղաշարժվելուն: Բետոնե սալերից ծածկույթները պետք է լինեն հարթ, իսկ նրանց միջև կարանների լայնությունը՝ 0,015 մ-ից ոչ ավելի:

Սույն պաստառը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Պաստառի բովանդակության համար պատասխանատու է «Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: